# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

### Ա.

*Հայրապետական տնօրինութիւնք.*

Կոնդակ *յանուն Տ. Յովսէփ Արքեպիսկ. Սարաճեան, որով կարգադրուի առնէ զՄարդուկէսեան Ղեւոնդ վարդապետն։ Թ.* 1220.

— *Յանուն Սինոդին Ս. Էջմիածնի, ընդ որում յղեցաւ պատճէն յայտարարութեան Կարապետի Կոստանեան վերաբերելոյն մետասան հազար ռուբլի պահանջից Հառիճոյ վանուց։ Թ.* 1240.

— *Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով կարգադրուի զինի Թովմա վարդապետն, դասելով ընդ հարկատուս։ Թ.* 1229.

— *Յանուն պ. Մինասայ Բերբերեան, որով կարգեցաւ տեսուչ. Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյ։ Թ.* 1255.

— *Յանուն եկեղեցական խորհրդոյ հայոց Մոսկուայի, որով գրեցաւ տալ զչորս հարիւր ռուբլի պ. Ստեփանոսի Մամիկոնեան ի ճանապարհածախս վասն երթեւեկի ի Մոսկուայէ ի Տփխիս։ Թ.* 1275.

— Յանուն Տ. Յովհաննէս եպիսկ. Շիրակունւոյ, որով շնորհեցաւ տիտղոս Արքեպիսկոպոսութեան։ Թ. 1280.

— Յանուն Սինոդին Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ առնել տնօրինութիւն վասն գանձելոյ զապառիկս Մայր Աթոռոյ։ Թ. 1319.

— Յանուն Առաջնորդին Ղարաբաղու, որով պատուիրեցաւ թողուլ զգործակալութիւնն Իգիրմիդորդի ընդ իշխանութեամբ թեմին Ղարաբաղու։ Թ. 1321.

— Յանուն Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի ի նոյն միտս։ Թ. 1323.

— Յանուն Նորին, որով պատուիրեցաւ յորդորել զմեծատունս տալ յօգնութիւն Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյս։ Թ. 1323.

— Յանուն Առաջնորդի թեմին Հայոց Նոր Նախիջեւանի և Բեսարաբիոյ ի նոյն միտս։ Թ. 1324.

— Յանուն փոխ թեմակալին Երեւանայ ի նոյն միտս։ Թ. 1325.

— Յանուն Առաջնորդին Շամախւոյ ի նոյն միտս։ Թ. 1326.

— Յանուն Կոնսիստորիային Աստրախանի ի նոյն միտս Թ. 1327.

— Յանուն փոխանորդին Հին Նախիջեւանի Տ. Լեւոն վարդապետի, որով պատուիրեցաւ գալ ի Ս. Էջմիածին։ Թ. 1336.

— Յանուն փոխ թեմակալին Երեւանայ, որով պատուիրեցաւ փութացուցանել զընտրութիւն Նոր փոխանորդին Հ. Նախիջեւանի։ Թ. 1337.

— Յանուն Տէր Գէորգ Արքեպիսկ. Սուրէնեան, Ստեփանոսի Մամիկոնեան և Սիրականայ Տիգրանեան, որով կարգեցան ներկայացուցիչ ի կողմանէ Նորին Սրբութեան

*ի մասնակցել ի Մասնաժողովին, կազմելոյն ի Տ. Փոխար-քայէ վասն մշակելոյ և կազմելոյ զկանոնս ծխակ. դպրո-ցաց Հայոց։* Թ. 1342.

*— Գրութիւն յանուն Առաջնորդական փոխանորդին Վանայ, ընդ որում յղեցաւ փոխանակագիր մի* № 955 *քսան և չորս ոսկւոյ և* 47 *ղուրուշի ի նպաստ սովելոց Վաս-պուրականի։* Թ. 1221.

*— Գրութիւն յանուն Կուսակալին Ատրպատականի վասն բարւոքելոյ զվիճակ Հայոց Մակուայ և դադարե-ցուցանելոյ զգաղթ նոցին։* Թ. 1222.

Բ.

Հայրապետական գոհունակութիւնք եւ օրհնութիւնք.

Կոնդակ *օրհնութեան յանուն «Հայաստանի Աստղ» ընկերութեան, վասն նուիրաբերեալ ի նպաստ կարօտելոց Վասպուրականի եօթն անգղ. ոսկւոյ։* Թ. 1182.

*— Օրհնութեան յանուն Աբրահամու Նասիբեան բնա-կելոյն ի Բագու քաղաքի վասն բանալոյ ի Բոլլուջա գեղջ երկսեռ միդասեան ծխական դպրոց և նուիրելոյ մի հա-զար ռուբլիս ի նպաստ Թեմ. դպրանոցին Շուշւոյ։* Թ. 1245.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ *լանջախաչի յանուն գործակալին Խաչենի Տ. Մեսրովբ քահանայի Շահիջանեան։* Թ. 1244.

*— Լանջախաչի յանուն Թադէոս քահանայի Ատո-մեանց Ասխաբադ քաղաքի։* Թ. 1249.

*— Լանջախաչի յանուն Արսէն քահանայի Հալաճեան Արմաւիր քաղաքի։* Թ. 1282.

— Վարդապետական լանջախաչի յանուն Մեհրուժան վարդապետի Աշխարունեայ Առաջնորդական տեղապահին Արաբկերու, Թ. 1284.

— Վարդապետական լանջախաչի յանուն Մեսրովբ վարդապետի Նարոյեան, տեսչի ուսումնարանին Դպրեվանուց Արմաշու։ Թ. 1228.

— Վարդապետական լանջախաչի յանուն Եղիաս վարդապետի Սաչլեան ժամօրհնողի Մայր եկեղեցւոյ Կ. Պոլսոյ։ Թ. 1286.*

— Քահանայական լանջախաչի յանուն Կարապետ աւագ քահանայի Մխալեան Պարտիզակի։ Թ. 1287.

— Քահանայական լանջախաչի յանուն Ոսկի քահանայի Պեպեան Նիկոմիդիոյ։ Թ. 1388.

— Քահանայական լանջախաչի յանուն Միքայէլ աւագ քահանայի Երամեան Ադաբազարի։ Թ. 1289.

— Քահանայական լանջախաչի յանուն Ղեւոնդ քահանայի Թօմայեան Տրապիզոնի։ Թ. 1290.

— Քահանայական լանջախաչի յանուն Սուրէն քահանայի Տերոյեան Առաջնորդական փոխանորդին Բալուայ։ Թ. 1291.

— Քահանայական լանջախաչի յանուն Յարութիւն աւագ քահանայի Մինասեան Առաջն. փոխանորդին Մշոյ։ Թ. 1292.

— Քահանայական լանջախաչի յանուն Մկրտիչ քահանայի Ազարեան Պարտիզակի։ Թ. 1293.

— Կամիլաւկայի յանուն Աբրահամ քահանայի Շխինեանց Պեատիգորսկ քաղաքի։ Թ. 1303.

— Լանջախաչի յանուն Կարապետ Ծ. վարդապետի Մաղըրմեան՝ Առաջնորդական տեղապահի Պանդըրմայի և Պալըքէսիրի։ Թ. 1305.

## Մակագրութիւնք

*Ի յայտ. Կոնսիստորիային Աստրախանի. «Պատուիրեմք Կոնսիստ. Աստրախանի չընդունել զհրաժարական Գրիգոր քահանայի Իզքաշեանց և կարգել այլ ևս զմին ի քահանայից տեղւոյն անդամ կառավարութեանն մինչ ցհաստատութիւն առաջնորդին»։ Թ.* 1216.

*Ի խնդրագրի լիազօրաց հասարակութեան Ղուբա քաղաքի. «Պատուիրեմք Առաջնորդին Շամախւոյ կարճել զկենսաթոշակ Աւշարեանց քահանային ըստ համախոստական վճռոյ ժողովրդականաց Ղուբա քաղաքի, որով և վախճան դնել գործոյս»։ Թ.* 1236

*Ի յայտ. Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի. «Ջիջեալ Մեր ի հանգամանս գծագրեալս ի յայտարարութեան գործակալին, թոյլ տամք զպսակ խոստացելոյն ի վեցերորդում աստիճանի ազգականութեան, պատուիրելով Առաջնորդին Հայոց Վրաստանի տնօրինել զարժանն»։ Թ.* 1265.

*Ի յայտարարութեան լիազօրաց հոգաբարձութեան թեմ. դպրանոցին Շուշւոյ. «Ի նկատ առեալ Մեր զտնտեսական անձուկ վիճակ թեմական դպրանոցին Շուշւոյ, առաջադրեմք Սինոդին Ս. Էջմիածնի դարձուցանել զդրամս ըստ խնդրոյ լիազօրաց հոգաբարձութեանն»։ Թ.* 1318.

---

### ԲԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

---

*Ի* 13-*ն յուլիսի Ըստ հրամանաց Սինոդին Ս. Էջմիածնի հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորիային Շամախւոյ՝ պահանջել ի Մեսրոպ քահանայէ Տ. Ոսկանեանց* 30 *ռուբլիս յօգուտ որբոց և այրեաց. Տ. Տ. Յովհաննէս և Աբգար քահանայից՝ առնել զխիստ յանդիմանութիւն։ Հ.* 610.